ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/23 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՁԵՎՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ARMEPS.AM ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

հ. Մարտունի «19»«08» 2024թ.
ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյան
Անդամներ՝ Ս. Աբրոյան
Վ. Թամոյան
Կ. Դավթյան
Թ. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Սիմոնյան

1. «ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/23» **ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին**

1.1 «ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/23» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2024թ. օգոստոսի 16-ին ժամը 15:00-ն: Մրցույթի հետ կապված հարցումներ և պարզաբանումներ չեն կատարվել:

1.2 «ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/23» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով հայտերի բացումը կատարվել է Armemps համակարգի միջոցով՝ օգոստոսի 16-ին ժամը 15:00-ին:

1.3 Ընդունել ի գիտություն, որ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը Էլ. փոստ, հեռ. համար
1	«ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ » ՍՊԸ	ՀՀ. Շ/Մ գ.Ախուրյան Հ.Շահբազյան 10տուն	livalcontrol@mail.ru 05559324
2	«ԿՈՓ» ՍՊԸ	Գեղարքունիքիմարզք.ՄարտունիՎ.Մամիկոնյան 1	kop_ooo@mail.ru 077 21 14 95
3	«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ	մ.Գեղարքունիքի գ.Գեղամավան 2 փ.3 նրբ. տ 14.	texno.shin@mail.ru 093 828 121

2. Ընդունել ի գիտություն, որ գնահատող հանձնաժողովի կողմից փաստաթղթերն ուսումնասիրելու արդյունքում հայտնաբերվել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.

2.1

- «ԿՈՓ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում կան անճշտություններ, մասնավորապես՝

-ճիշտ չի լրացված հավելված 1.1-ը

-բացակայում է ներկայացված մասնագետի կողմից հավաստումը առ այն, որ «ԿՈՓ» ՍՊԸ -ի հաղթող ճանաչվելու դեպքում կներգրավվի շինարարական աշխատանքների որակի նկատմամբ տեխնիկական հսկողությանը

-մասնակցի կողմից ներկայացված կատարված նմանատիպ աշխատանքային պայմանագիրը հրավերի 2.7 կետին չի համապատասխանում, քանի որ դրանով ներկայացված պայմանագրի գումարը պակաս է ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/23 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի 50%-ից:

2.2 « **ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ » ՍՊԸ** կողմից ներկայացված հայտում կան անճշտություններ, նասնավորապես՝

-Կոնսորցիումի պայմանագրում բացակայում է գնման ընթացակարգի ծածկագիրը

- բացակայում է ներկայացված մասնագետների կողմից հավաստումը առ այն, որ «ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ -ի հաղթող ճանաչվելու դեպքում կներգրավվեն շինարարական աշխատանքների որակի նկատմամբ տեխնիկական հսկողությանը

-Իրական շահառուների մասին կայքէջի հղումը ներկայացված է 2023թ. համար, մինչդեռ անհրաժեշտ է ներկայացնել 2024թ. համար

- ճիշտ չի լրացված հավելված 1.1-ը, բացակայում են ներկայացված մասնագետների որակավորումները

2.3 Մնացած մասնակիցներ կողմից ներկայացված հայտերում անճշտություններ չեն հայտնաբերվել:

2.4 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ Կարգ/ 41-րդ կետի պահաջներով, որոշեց՝ կասեցնել նիստը և ծանուցել մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում /ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/23 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները

N	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային արժեքը /թվերով և տառերով/	Ինքնարժեք և շահույթ /թվերով և տառերով/	ԱԱՀ /թվերով և տառերով/	Ընդհանուր գինը /թվերով և տառերով/
Չափաբաժին		2 461 185			
1	«ԿՈՓ» ՍՊԸ		1 400 000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/	0	1 400 000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/
	« ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ » ՍՊԸ		1 537 500 /մեկ միլիոն հինգ գարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր/	307 500 /երեք հարյուր յոթ հազար հինգ հարյուր/	1 845 000 /մեկ միլիոն ութ հարյուր քառասունհինգ հազար /
	«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ		2 300 00 (Երկու միլիոն երեք հարյուր հազար)	0 /զրո/	2 300 00 (Երկու միլիոն երեք հարյուր հազար)

ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/23 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներից **«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ** ներկայացված գնային առաջարկում գնային առաջարկի արժեք և ընդհանուր գին սյունյակներում տառերով և թվերով նշված արժեքները միմյանց չեն համապատասխանում, սակայն գնային առաջարկի արժեք և ընդհանուր գին սյունյակների տառերով նշված արժեքները միմյանց համապատասխանում են, ուստի համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի գնահատող հանձնաժողովը որոշեց հիմք ընդունել ընդհանուր սյունյակում նշված տառերով գրվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

4.1 **ԳՄՄՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/23** ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել օրենքով սահմանված կարգով և ժամկետում մասնակիցների կողմից հայտերի շտկումը իրականացնելուց հետո, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունու համայնքապետարան, Շահումյան 2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ _____ Ս. Աբրոյան

_____ Կ. Թամոյան

_____ Կ. Դավթյան

_____ Թ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան